արխաիկ տարրերով, սկյութական նետասլաքի առկայությամբ, իսկ ներքին սահմանը՝ խեցեղենի ուշ անտիկ տեսակների բացակայությամբ և, որ կարևոր է, բնակավայրով մեկ սփռված ուշ թաղումներով։ Նրանք կատարված են հիմնականում առանց ուղեկցող նյութերի, իսկ հայտնաբերված հատուկենտ առարկաներից՝ ներճկված, մի ծայրը գնդիկավոր ապարանջանը, թույլ է տալիս թաղումները թվագրելու մ. թ. ա. I դարի վերջով, քանի որ մ. թ. I դարերում ներճկված ապարանջաններ այլևս չեն հանդիպում։ Մ. թ. ա. I դարի վերջին բնակավայրը դադարել է գոյություն ունենալուց ու վեր է ածվել դամբարանադաշտի։

Դատելով պեղված բնակարանների և այնտեղ հայտնաբերվող նյութի վիճակից և քանակից, այն հանգամանքից, որ չեն նկատվում հանկարծակի հրդեհման, ավերման հետքեր, կարելի է ասել, որ բնակավայրը լքվել է աստիճանաբար և բնակիչները հասցրել են իրենց հետ տանել քիչ թե շատ արժեքավոր իրերը, գուցե նաև ծածկի գերանները, որոնցից ոչ մի կտոր դեռ չի հայտնաբերվել։ Որոշակի բան ասել լքման պատճառների մասին առայժմ վաղ է, հնարավոր է, որ դա որևէ ձևով կապված է եղել Արտավազդ II-ից և հատկապես Արտաշես II-ից հետո երկրում ստեղծված անկայուն վիճակի հետ։ Այդուհանդերձ կարելի է մի քանի նախնական խոսք ասել բնակավայրի բնույթի մասին։ Այն բնակեցված է եղել շատ խիտ, քանի որ նրա պահպանված ողջ տարածքը լրիվ կառուցապատված է իրար հարող բնակարանների համալիրներով, շրջափակված է եղել հզոր, քարաշեն պարսպով։ Իր գրաված տարածքով ու դիրքով՝ ոչ թե բլուրի, այլ սարահարթի վրա, բնակավայրը կարծես միջին տեղ է գրավում մինչև այժմ պեղված և ուսումնասիրված Արմավիր, Արտաշատ քաղաքների և Գառնիի, Հացավանի, Գիտակի ամրոցների միջև։ Վերոհիշյալ բոլոր հատկանիշները ի մի բերելով, Կարճաղբյուրը պետք է դասել ավանների կարգին, նմանեցնելով Ախուրյանի ափին այժմ պեղվող Շիրակավանի անտիկ բնակավայրին։ Նմանատիպ բնակավայրերի հետագա ուսումնասիրությունը հնարավորություն կտա լույս սփռելու Հայաստանի անտիկ ավանների և նրանց հետ կապված բազմաթիվ հարցերի վրա։

Ի. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԳՈՏԻՈՎ ԴԱՄԲԱՐԱՆ ԶՈԴՈՒՄ

1974 թ. Հայաստանի պատմության պետական թանգարան հանձնվեց բրոնզե իրերի մի հավաքածու, որը, համաձայն թանգարանի գրանցման մատյանի (ինվ. № 12615/1—22), հայտնաբերվել էր ՀՍՍՀ Վարդենիսի շրջանի Զոդ ավանի մոտ գտնվող Տիգրանաբերդ ամրոցի շրջակայքում։

Այդ իրերն, ըստ երևույթին, գտնվել են կամ մի քանի ավերված դամբարաններից, կամ, որ ավելի հավանական է, մեկ հարուստ դամբարանից։ Խեցեղեն և այլ իրերի զգալի մասը ոչնչացել է, ինչպես հաճախ լինում է պատահական հայտնագործությունների ժամանակ և թանգարան չի հանձնվել։ Հավաքածուում կան բրոնզե գոտի, դաշույն և տարբեր զարդեր։

Դաշույնն ունի տերևաձև շեղբ և փոքրիկ լեզվակ մեկ անցքով, կոթառը ամրացնելու համար (աղ. I, 1)։ Նման դաշույնները Հայաստանում լավ հայտնի են ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի դամբարաններից (Ռեդկին լագեր, Կամո, Ջուջևան, Այրում, Պակեր և այլ վայրերից)։ Ի տարբերություն Զոդի դաշույնի, դրանք լեզվակի վրա կամ դաշույնի ուսերին ունեն ռնակն ամրացնելու 2—3 անցք։ Ուշ ուրարտական իրերի հետ այդ դաշույնի հայտնագործումը վկայում է, որ նման տիպի դաշույնները վերապրուկային ձևով հարատևել են մինչև մ. թ. ա. VII—VI դդ.։

Զոդում գտնված զարդերի թվին է պատկանում ոչ մեծ մեդալիոնը, որը կլոր է, կտրված բրոնզե թիթեղից, վերին մասում ունի շղթայից կախելու համար անցք (աղ. I, 2)։ Նման մեդալիոնները լավ հայտնի են ուրարտական հուշարձաններից (Թոփրախ կալե և Կարմիր բլուր)։ Բրոնզե օրինակների հետ մեկտեղ հանդիպում են ոսկե և արծաթե մեդալիոններ՝ զարդարված գահին նստած աստվածների ու նրանց առջև կանգնած կանանց կամ աստվածների ու նրանց զոհաբերվող այծեր նվիրող կանանց պատկերներով[1]։

Զոդում գտնվել են մի քանի տիպի ապարանջաններ, այդ թվում բարակ լարից պատրաստված օձագլուխ յոթ ապարանջան։ Վեցը զարդարված են կարճ գծիկներով, որոնք նրանց տալիս են ոլորվածքի տեսք, իսկ ծայրերը տափակացված են և նմանվում են ոճավորված օձագլխի (աղ. I, 5, աղ. II, 1, 2)։ Յոթերորդ ապարանջանը հարթ է, սակայն ծայրերը նույնպես օձագլուխ են (աղ. I, 4)։ Նման ապարան-

[1] Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, էջ 179—181։

ջաններ գտնվել են Արին բերդում, Կարմիր բլուրում, Բջնիում, Աթարբեկյանում, Մուխանում, Կամոյում, Վարդենիսում և այլուր[2]։ Զոդում գտնվել է նաև ատամնավոր ապարանջան, որի ձևը Հայաստանում ծագել է մ. թ. ա. I հազարամյակում և լայն տարածում ստացել մ. թ. ա. VII—VI դդ. (աղ. I, 8)։ Գտնված երկու այլ ապարանջանները տափակ են և ունեն ոլորված ծայրեր (աղ. I, 7)։ Այսպիսի ապարանջանները Հայաստանում հայտնի են սկսած ուշ բրոնզի դարաշրջանից և հարատևում են մինչև I հազարամյակի կեսերը, ուստի և չեն կարող թվագրվող նյութ հանդիսանալ։

Ապարանջանների հետ գտնվել են հաստ լարից պատրաստված երեք օղ, որոնցից մեկի ծայրն ունի օձագլուխ տեսք։ Դրանց հավանաբար ճարմանդներ են, ուսակալը կամ ձիասարքն ամրացնելու համար (աղ. II, 3, 7)։

Այլ կարդերի թվում գտնվել են հինգ ականջօղեր. երկուսը պատրաստված են բարակ լարից, որի մի ծայրը սրված է, իսկ մյուսը՝ ծալված և կենտրոնում փաթաթված հիմքին, ստեղծելով մեկ կողմից երկլար խնձորակ։ Սրա առկայությունն ականջօղը նմանեցնում է Կարմիր բլուրում և Օշականում գտնված ուրարտական ականջօղերին (աղ. II, 10, 11)։ Երրորդը միաձույլ է և նման կիսալուսնի, մի ծայրը սրված է ականջին հագցնելու համար (աղ. II, 6)։ Նման ականջօղ գտնվել է մ. թ. ա. VI—V դդ. թվագրվող Կարճաղբյուրի դամբարաններից մեկում[3]։ Չորրորդ ականջօղը նման է սնամեջ կոճակի, որի մի եզրից ձգվում է կիսաշրջանաձև լար՝ ականջին հագցնելու համար (աղ. II, 9)։ Որքան մեզ հայտնի է, այսպիսին Հայաստանում առաջին անգամ է հանդիպում։ Վերջինը՝ հինգերորդը, պատրաստված է ոլորապտույտ փաթաթված լարից, որը երկու կողմից սրածայր է (աղ. II, 5)։



Աղյուսակ I



Աղյուսակ II

Բացի նշված առարկաներից Զոդի դամբարանից գտնվել են՝ վզնոցի կես (աղ. I, 3), երկու ֆիբուլ (աղ. II, 12) և 19 հատ կաուրիխխունջի մի շար (աղ. II, 8), որը Հայաստանում հաճախ է հանդիպում մ. թ. ա. I հազարամյակի հուշարձաններում։

Այսպիսով, Զոդում գտնված նյութերը թվագրվում են մ. թ. ա. VII—V դդ.։

Ավելի ստույգ է թվագրվում ամենահետաքրքիր իրը՝ գոտին, որը պատրաստված է բրոնզե թիթեղից, ունի 1,3 մ երկարություն և 12 սմ լայնություն (նկ. 1), մակերեսը զարդարված է հինգ կետագարդ լայն շարքերով։ Գոտու աջ ծայրում կետազարդ շրջանակի մեջ տեղադրված են 5 կենաց ծառ դեպի վեր ուղղված պտուղներով, շատ նման ուրարտական կենաց ծառերի պատկերներին. յուրաքանչյուր ծառը

2 Ս. Ա. Եսայան, Հայաստանի պետական պատմական թանգարանի ապարանջանները, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1964, № 2, էջ 89։

3 Ի. Կարապետյանի պեղումներից (նյութերը չեն հրապարակվել)։

անջատված է մյուսից պալմետկաներով, որոնց պատկերները նմանվում են Մեծամորի թանգարանում[4] և Ադանայի գավառագիտական թանգարանում[5] պահվող ուրարտական գոտիների վրա փորագրված պալմետկաներին։ Գոտու աջ կողքի կենտրոնում, մասամբ ծածկելով կենաց ծառը, ամրացված է օղ՝ ճարմանդի կեռիկը հագցնելու համար։ Ինքը ճարմանդը չի պահպանվել, սակայն օղի առկայությունը հնարավորություն է տալիս հաստատել, որ գոտու ձախ կողմին ճարմանդ է եղել։ Նման օղերով ուրարտական գոտիներ հայտնի են Իգդիրից[6], Կարմիր բլուրից[7], Տլիի դամբարանադաշտի 40-րդ դամբարանից[8] և Ադանա քաղաքի թանգարանից[9]։ Տլիի նշված դամբարանում գտնված ճարմանդը և մեկ դաշույնը նման են Զոդում գտնվածին։

Կետազարդ նախշով զարդարված ուրարտական գոտիներ են հայտնաբերվել Իգդիրում[10], երեք այդպիսի գոտիներ գտնվել են Կարմիր բլուրում[11], երեք նման գոտիների բեկորներ՝ Էրեբունի ամրոցի Սուսի տաճարում և Դ—2 կառարանում[12]։ Երկու այդպիսի գոտիներ հայտնի են Խրտանոցի դամբարանադաշտից[13] և մեկական՝ Լենինականից[14] ու Մալիշկայից[15]։

Զոդի գոտու վրա պատկերված կենաց ծառը նման է Կարմիր բլուրի, Անիպեմզայի, Զաքիմի գոտիների, ինչպես նաև ուրարտական կնիքների և Մելգունովյան ու Կելերմեսյան դամբարանաբլուրներից գտնված դաշույնների ոսկյա



Նկ. 1

պատյանների վրա քանդակված կենաց ծառերին։

Ուրարտական արվեստում տարածված էր կենաց ծառի մի այլ մոտիվ, երբ ծառի կողքին կանգնած են լինում թևավոր աստվածներ և տարբեր կենդանիներ։ Նման պատկերներ կան Կարմիր բլուրում գտնված Արգիշտի I-ի և Սարդուրի II-ի սաղավարտների վրա, որտեղ ծառերի շուրջը կանգնած են թևավոր աստվածներ։ Հայկաբերդից գտնված կնիքի վրայի ծառը տեղավորված է թևավոր աստվածուհու և այծի միջև։ Նոր Արեշի գոտու վրա պատկերված ծառի երկու կողմերում կանգնած են թևավոր առյուծներ։

Այսպիսի պատկերներ կան նաև Սակիզյան գանձում գտնված ոսկե զարդի վրա, ուր պատկերված են երկու կենաց ծառ, մեկը մյուսի

---

4 Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, նկ. 170։

5 O. A. Tasvurek, The Urartian belts in the Adana regional Musseum, Ankara, 1975, նկ. 3, 25։

6 Б. А. Куфтин, Урартский колумбарий у подошвы Арарата и Куро-Аракский энеолит, «Вестник Музея Грузии», XIII—B, Тбилиси, 1944, նկ. 26։

7 Б. Б. Пиотровский, История и культура Урарту, Ереван, 1944, նկ. 97։

8 Б. В. Техов, Об одном погребальном комплексе из Тли (Юго-Осетия), «Советская Археология», 1961, № 4, էջ 131, նկ. 5։

9 O. A. Tasvürek, նշվ. աշխ., աղ. 18։

10 Б. А. Куфтин, նշվ. աշխ., նկ. 26։

11 Б. Б. Пиотровский, Ванское царство, նկ. 43, 82։

12 Էրեբունի թանգարանի ընվ. համարներ 2162/29, 2164/79։

13 А. А. Мартиросян, Раскопки в Головино, Ереван, 1954, էջ 17։

14 А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 284։

15 С. А. Есаян, Урартский пояс из Малишки, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. դիտ.), 1975, № 1, էջ 94։

վրա։ Վերին ծառի երկու կողմերում կանգնած են մարդկային գլուխներով թևավոր առյուծներ, իսկ ներքևի ծառի շուրջը կան թևավոր և եղջյուրներով առյուծներ կարիճի պոչերով, որը չափազանց բնորոշ է ուրարտական արվեստի համար[16]։

Հետաքրքիր հայտնագործություն է կատարվել Արմավիր բլուրի պեղումների ժամանակ (հին Արգիշտիխինիլի)։ գտնվել է եղջյուրի բեկոր, վրան քանդակված կենաց ծառ, շուրջը դեմ-դիմաց կանգնած երկու այծ[17]։ Նշված բեկորը ծառայել է ծեծման եղանակով ոսկե կամ բրոնզե իրեր զարդարելու համար և վկայում է, որ հին Արգիշտիխինիլիում եղել է նման իրերի պատրաստման արհեստանոց։

Բ. Բ. Պիոտրովսկին ուրարտական ամրոցներից և Հյուսիսային Կովկասից ու մերձդնեպրյան վաղ սկյութական դամբանաբլուրներից հայտնաբերված հարուստ նյութերի համեմատության հիման վրա ապացուցել է, որ Հայկական լեռնաշխարհում հայտնաբերված, կենաց ծառով զարդարված գոտիները պատրաստված են ուրարտական արվեստի աղդեցության ներքո[18]։

Ալսպիսով, Զոդից գտնված գոտին նոր վկայություն է տեղական տոհմացեղային ավագանու միջավայրում ուրարտական արվեստի լայն տարածման մասին։

Պատմ. գիտ. դոկտոր Ս. Ա. ԵՍԱՅԱՆ

16 Б. Б. Пиотровский, Ванское царство, էջ 249։

17 Б. Н. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, «Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 4, նկ. 8։ Б. Б. Пиотровский, Скифы и Урарту, доклад, прочитанный на II международном симпозиуме по армянскому искусству, Ереван, 1978, էջ 5։

18 Б. Б. Пиотровский, История и культура Урарту, էջ 312—324։ Նույնի՝ Ванское царство, էջ 249—256։

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ИЗУЧЕНИЯ ИСТОРИИ И КУЛЬТУРЫ НАРОДОВ ВОСТОКА В ЛЕНИНГРАДСКОМ ОТДЕЛЕНИИ ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ АН СССР

Ленинградский академический востоковедный центр имеет, как известно, прочные традиции изучения исторического и культурного прошлого народов Востока. Это изучение постоянно базировалось на тщательном анализе материала первоисточников. В связи с этим заслуживает, в первую очередь, упоминания разносторонняя работа по описанию, изданию и изучению богатейшей коллекции письменных памятников народов Востока, собранной в ЛО ИВ АН СССР усилиями многих поколений отечественных востоковедов. Она широко известна сегодня в научном мире благодаря проделанной за последние два десятилетия работе исследователей-востоковедов ЛО ИВ АН СССР по подготовке научных каталогов основных фондов собрания. Эти каталоги содержат все необходимые сведения о рукописных коллекциях и позволяют специалистам подойти к важнейшей научной задаче — выявлению наиболее значительных, подчас уникальных, текстов, содержащих ценные новые сведения об историческом и культурном прошлом народов Востока. В настоящий момент изданы каталоги следующих фондов: монгольского (1 том), три выпуска каталога арабских рукописей, два выпуска китайских рукописей из Дуньхуана, описание курдских рукописей, описание маньчжурских и корейских рукописей, описание рукописей на хинди и панджаби, описание уйгурских рукописей, описание тюркских рукописей (вып. 1 и 2), шесть выпусков описания японских рукописей, каталог персидских рукописей (в двух томах), десять выпусков описания персидских рукописей, описание грузинских рукописей и документов, описание рукописей на языке пашто, каталог фонда китайских ксилографов[1].

1 Подробные сведения об издании описаний указанных рукописей см.: «Азиатский музей—Ленинградское отделение Института востоковедения АН СССР», М., Наука, 1972, 595 стр.; Л. Н. Меньшиков, Дальневосточные и центральноазиатские рукописные фонды Ленинградского отделения Института востоковедения АН СССР. (Очерк археографических работ) — «Археогр. ежегодник за 1970 год», М., 1971, стр. 277—290.